



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

#### ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԽԱԿԱՆ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԸ

#### ՕԺՏՈՒԵՑԱՒ ՍԵՓԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՈՎ ՄԸ

- **ԼԵՐԻ ՊԱՐՆԸ 400,000 ՏՈՒՆԻ Ի ԾԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՏԱՐԵՑ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿՆՈՋ՝ ՍԵՂԱ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ-ՊԱՐՆԸԻ**

Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը անհուն գոհունակութեամբ կը յայտնեն մեր հաւատացեալ ժողովուրդին, թէ Լաս Վեկասի մեր ծխական համայնքը օժտուեցաւ սեփական կալուածով մը, որ պիտի վերածուի եկեղեցւոյ ու մշակութային կեդրոնի:

Լաս վեկասաբնակ Տիար ԼԵՐԻ ՊԱՐՆԸ, ի յիշատակ իր հանգուցեալ կնոջ՝ Սեղա ՏԵՐ Կարապետեան-Պարնգի, 400,000 (չորս հարիւր հազար) տոլարի իշխանական նուիրատուութիւն մը կատարելով, հանդիսացաւ գլխաւոր բարերարը:

Սեղա ՏԵՐ Կարապետեան-Պարնգ դուստրն էր Յեղասպանութենէն փրկուած ծնողներու, ու պատմական ոճիրին զոհ տուած էր երկու եղբայրներ: Ան հասակ առած էր հայաշունչ ընտանիքի մը յարկին տակ, կամուրջ մը դառնալով հայկական աւանդներուն ու մեր եկեղեցւոյ հաւատքին փոխանցման, ապա նաեւ իր իմացական կեանքին ընթացքին, մեծ ծառայութիւն մատուցած էր մեր եկեղեցւոյ ու հայ համայնքին, իսկ վերջին տասնամեակներուն՝ յատկապէս Լաս Վեկասի մեր համայնքին, նպատակ դարձնելով նմաններուն օգտակար հանդիսանալը:

Ի յարգանս եւ ի յիշատակ իր հանգուցեալ կնոջ ու ՏԵՐ Կարապետեան ընտանիքի հանգուցեալներուն, բարերարին փափաքով, ու խորհրդակցաբար Ազգային Վարչութեան ու Ծխական Յանձնախումբին հետ, որոշեցինք համալիրը կոչել Ս. Կարապետ Հայց. Առաքելական եկեղեցի ու Մշակութային կեդրոն:

Առաջնորդ Սրբազանը եւ Ազգային Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան Կիրակի, 20 Դեկտեմբերին Լաս Վեկաս այցելեցին ու այս պատմական իրադրոժումին առիթով խնդակից եղան քաղաքի ծխական համայնքին: Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ մատուցեց, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետին ու ծխական համայնքի յանձնախումբի

անդամներուն հետ միասին այցելեց նոր կալուածը, ուր կատարեց նոր կալուածի օրհնութեան արարողութիւնը:

Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութիւնը այսու գնահատանքով լի շնորհակալութիւն կը յայտնեն գլխաւոր բարերար ԼԷՐԻ Պարնզի, իր այս նուիրաբերումին համար: Նաեւ գնահատանք՝ Լաս Վեկասի մեր եկեղեցւոյ Ծխական Յանձնախումբին, գլխաւորութեամբ Տիար Ատրուշան Արմէնեանի, ու գործակիցներուն, որոնք անդուլ աշխատանքով իրականացուցին այս պատմական քայլը: Գնահատանք՝ բոլոր այն ազգայիններուն, որոնք նիւթապէս ու բարոյապէս զօրավիգ կը կանգնին ծրագիրին: Այս իրագործումը ցուցանիշ մը կը հանդիսանայ Լաս Վեկասի հայկական գաղութին ու ընդհանրապէս մեր Թեմի կենսունակութեան, ծառայական դաշտի ընդարձակման:

Թող Աստուած օրհնէ բարերարն ու բոլոր նուիրեալ ծառայողները, եւ իր Ս. Աջին հովանիին տակ՝ սկսուած ժողովրդանուէր գործը առաջնորդէ իր յաջող լրումին:

**ԴԻՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

## **LAS VEGAS PARISH COMMUNITY IS ENDOWED WITH A NEW PROPERTY**

*- MR. LARRY BARNES BEQUEATHS \$400,000 IN MEMORY OF HIS  
LATE WIFE SEDA DER GARABEDIAN-BARNES*

It is with great joy that H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Religious and Executive Councils announce that the Las Vegas parish community has purchased a property that will house a church and cultural center.

The grand benefactor of this project is Las Vegas community member Mr. Larry Barnes, who made a generous donation of \$400,000 in memory of his late wife Seda Der Garabedian-Barnes.

Seda Der Garabedian-Barnes was the daughter of Genocide survivors; she lost two brothers during the forced marches. Raised in an Armenian household with parents who instilled in her love and pride for their heritage, Seda grew up to become an active member of the Armenian community, always lending a helping hand where needed. In the last two decades, she served in the Armenian community of Las Vegas, where she was active in the church and various organizations.

To honor the memory of the late Seda Der Garabedian Barnes and Der Garabedian family members, and per the request of the benefactor, the sanctuary and complex will be named St. Garabed Armenian Apostolic Church and Cultural Center.

On Sunday, December 20<sup>th</sup>, 2009, the Prelate and Executive Council Chair Dr. Garo Agopian visited the parish and met with the parish council

and community members. The Prelate also celebrated Divine Liturgy and later visited and blessed the property.

The Prelate and Councils extend their gratitude to Mr. Larry Barnes for his generous donation, commend the Parish Council members, chaired by Mr. Adroushan Armenian, for their diligence and commitment to this project, and thank all those who have morally and financially supported this endeavor.

May God bless benefactor Mr. Larry Barnes and the memory of his beloved late wife, and may He guide the Las Vegas parish community to the successful realization of this dream.

**WESTERN PRELACY SECRETARIAT**